**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

**ՀՐԱՄԱՆ**

«27» մարտի 2019թ. N 37 -Ա

ք. Ստեփանակերտ

**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի մարտի 15-ի N 168-Ա որոշումը՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ**

1. Արցախի Հանրապետության բնության հուշարձանների գույքագրման, պահպանման գոտիների սահմանման և անձնագրերի մշակման ապահովման նպատակով ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով.

| | |
|---|---|
| 1)Վահրամ Հայրապետյան | «Կանաչ Արցախ» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ տնօրեն՝ խմբի ղեկավար |
| 2) Արմեն Զալյան | «Կաչաղակաբերդ» ազգային պարկի վարիչ |
| 3) Գևորգ Նասիբյան | «Սոսիների պուրակ» պետական արգելավայրի վարիչ |
| 4) Էլինա Հայրապետյան | Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարության (այսուհետ՝ նախարարություն) աշխատակազմի ղեկավար |
| 5) Մարթա Մկրտչյան | նախարարության աշխատակազմի իրավաբանական, տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ |
| 6) Անի Հայրապետյան | նախարարության աշխատակազմի բնապահպանության և ընդերքի պետական տեսչության ընդերքի երկրաբանական և մարկշեյդերական վերահսկողության բաժնի առաջատար մասնագետ |
| 7) Ֆելիքս Դալլաքյան | նախարարության աշխատակազմի պայմանագրային աշխատող |
| 8) Արտուր Գաբրիելյան | Ասկերանի տարածքային բնապահպանական ավագ պետական տեսուչ |
| 9) Նարեկ Գյուրջյան | Մարտակերտի տարածքային բնապահպանական ավագ պետական տեսուչ |

| | |
|---|---|
| 10) Գագիկ Օհանյան | Հադրութի տարածքային բնապահպանական ավագ պետական տեսուչ |
| 11) Վարուժան Նասիբյան | Շուշիի տարածքային բնապահպանական ավագ պետական տեսուչ |
| 12) Մամիկոն Ներսեսյան | Քաշաթաղի տարածքային բնապահպանական ավագ պետական տեսուչ: |

2. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ աշխատանքներն իրականացնել սույն թվականի մարտի 27-ից դեկտեմբերի 15-ն ընկած ժամանակաշրջանում, կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը ներկայացնել նախարարի տեղակալ Ալեքսանդր Գասպարյանին մինչև սույն թվականի դեկտեմբերի 20-ը:

3. Նախարարի տեղակալ Ալեքսանդր Գասպարյանին՝ ծրագրի արդյունքների վերաբերյալ ամփոփ հաշվետվությունը ներկայացնել նախարարին մինչև սույն թվականի դեկտեմբերի 25-ը:

4. «Արցախի Հանրապետության բնության հուշարձանների անձնագրերի կազմման միջոցառումների 2019 թվականի ծրագիր»-ի անմիջական վերահսկողությունը վերապահել Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարի տեղակալ՝ Ալեքսանդր Գասպարյանին:

5. Նախարարության աշխատակազմի քարտուղարության պետին՝ հրամանը հասցնել նախարարի տեղակալներին, աշխատակազմի ղեկավարին, բնապահպանական և ընդերքի պետական տեսչության պետին, բնական ռեսուրսների, թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման գործակալության պետին, աշխատանքային խմբի անդամներին՝ իրենց վերաբերող մասով:

Ֆ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ